Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի ֆոնդային մասում փոփոխություններ կատարելու մասին

Համայնքում կապիտալ աշխատանքներ իրականացնելու համար ձեռք է բերվել փորձաքննություն անցած նախագծա-նախահաշվային աշխատանքների փաթեթներ:

Համաձայն ձեռք բերված նախագծա-նախահաշվային փաթեթների՝ նախատեսված շինարարական աշխատանքների իրականացման համար համայնքի 2020 թվականի բյուջեի ֆոնդային մասում անհրաժեշտ է հատկացնել հետևյալ միջոցները.

1. Մասիս քաղաքի Դպրոցականների փողոցի մի հատվածի /12 շենքից մինչև 23/13շենք/, Հանրապետության փողոցի մի հատվածի /ԱԿԲԱ բանկի դիմաց/ մայթերի հիմնանորոգում՝ 15376,7 հազար դրամ.
2. Մասիս քաղաքի փողոցների հարթեցման և խճապատման աշխատանքներ՝ 7795,9 հազար դրամ.
3. Նոր թաղամաս թիվ 16շենքի բակի բարեկարգում՝ 3561,77 հազար դրամ.
4. Մասիս Կայարանի 9-րդ շենքի տանիքի հիմնանորոգում՝ 6238,9 հազար դրամ.
5. Մասիս քաղաքի Նոր թաղամաս 36 շենքի բակի բարեկարգում և խաղադաշտի կառուցում՝ 11508,11 հազար դրամ.
6. Մասիս քաղաքում 8 հանգստի տաղավարների ձեռք բերման և տեղադրման աշխատանքներ՝ 10312,68 հազար դրամ
7. Նոր հողերի 5-րդ թաղամաս 4-րդ փողոցի վերջնամասի աջ հատվածում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում՝ 17559,56 հազար դրամ.
8. Մասիս քաղաքի երաժշտական դպրոցի դահլիճի, պատուհանների և սան հանգույցի հիմնանորոգում՝ 12466,73 հազար դրամ.

Ընդհանուր կապիտալ աշխատանքների ձեռք բերման համար անհրաժեշտ է 84820.35 հազար դրամ, որը առաջարկվում է հատկացնել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների վարչական սարքավորումներ հոդվածից:

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Գարրիելյան

Ֆինանսական բաժնի պետ՝ Ն. Սահակյան